

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՎԱԿԱՆԵՐԻ  
ՄԱՐՏԻԿԱՆ ՄԻՐԱԳՈՐԾՈՒՐՅՈՒՆԵՐԸ



ՍՈՒԽ ԳԻՏՈՒԹ. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

9(47.825)

7 - 36

4989

- 36 | Нижеследующие  
Законы предпринимаются

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՎԱԿԱՆԵՐԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԱԽԲԱԳՈՐԾՈՒՔՈՒՆՆԵՐԸ

2(47.325)27

ԱՏՈՒԳՎԵՇ է 1961 թ.

Դ. 36

Ա. ՂԱՆԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅ ՔԱԶՈՐԴԻՆԵՐ

A I 6870 4989

ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹ ՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԳԻ ՀՈՅԿԱԿԱՆ ՅԱԼԻԱԼ  
ԽՐԵՎԱՆ

1943

Մերիա՝ խմբագրաւրյամբ ակադ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԲԵԼՈՒ

Շապիկը ճկարիչ Մ. Ն. ՄԱՆԻ

Երկար դարերի ընթացքում օտարերկրյա  
նվաճողների գեմ մղած ազատազրական  
պատերազմների բովի մեջ, շատ անվանի  
հերոսների — բարձրաստիճան զորավարների  
հետ, հայ ժողովուրդը ծնել ու սնել է նաև  
անթիվ «անանուն» հերոսներ — շարքային  
քաջորդիներ։ Իրենց հայրենիքին սպառնա-  
ցող վտանգի ծանր չօրերին, ժողովրդի խի-  
զակն ու. անվեհեր այդ զավակները հանդես  
են բերել հոգու մեծ արիություն, ցույց  
են տվել անձնազոհության փայլուն օրի-  
նակներ։ Մարտերի վճռական վայրկյան-  
ներին արհամարհելով մահը, նրանք նետ-  
վել են պատերազմի ամենապատասխանա-  
տու ճակատամասերը, անվախորեն խռ-  
յացել թշնամու վրա, հաճախ, սեփական  
կյանքի գնով, փրկիլ հայրենիքի անկախու-  
թյունը, իրենց մայրերի ու քույրերի պա-  
տիվը, ծերերի ու երեխաների կյանքը։

Մատենադարանների գարակներում շար-  
ված փոշեպատ մագաղաթներն ու հին գրքե-  
րը—պատմության այդ անխոս վկաները—  
այսօր պատմում են մեզ բռն ժողովրդա-  
կան այդ հերոսների կյանքի ու գործունեու-  
թյան մասին։

Թերթենք պատմական անցյալի տարե-  
գրության էջերը և վերհիշենք մեր հերոսա-  
կան նախնիների կատարած սխրագործու-  
թյունների առավել ուշագրավ դրվագները<sup>1</sup>։

Մեր առջեն է առաջին հայ քաջորդին։  
Հայ պետականության հիմնադիր Արտաշեմ

<sup>1</sup> Ժողովրդական այդ «անանուն» հերոսների մասին  
գրավոր տեղեկություններ կարելի է գտնել հայոց  
(և ոչ միայն հայոց) հնագույն, միջնադարյան և  
նոր շրջանի պատմա-գրական հուշարձաններում։ Ճիշտ  
է, այդ տեղեկությունները, անվանի հերոսների մա-  
սին եղած տասնյակ էջերի համեմատությամբ, ընդ-  
հանուր առմամբ, շատ քիչ են ու կցկատուր (այդպես  
է եղել հատկապես հնում), սակայն, իրենց բովան-  
դակությամբ զրանք չտփազանց ուշագրավ են։

թագավորի դայակի որդին է դա, հերոսական Գիտակը։ Մոտ 2000 տարի է անցել այն ժամանակներից, երբ ապրել ու կռվել է նուսակայն, նրա կատարած սխրագործությունն այսօր էլ հուզում է մեզ։ Դաընթերի խորքից կարծես հնչում է մեր ականջին Գիտակի հաղթական սրի շաչյունը։

Մեր թվականության առաջին դարն է (53 թ.): Արտաշես (=Տրդատ) թագավորը, Սմբատ սպարապետի հետ հայկական զորքերի գլուխն անցած՝ կատաղի կոփմանը է մղում իր հարազատներին բնաջնջող, հայրենական գահը զավթող, Հայաստանի թշնամի, հռոմեական գործակալ Երվանդի (=Հրադամիզդ) գեմ։ Թշնամու հեծյալները շրջապատում են Արտաշեսին. նրա գլխին սկսում է պտտվել մահվան ուրվականը։ Հանկարծ հայոց զորքի միջից առաջ է նետվում Գիտակը և վտանգի տակ գնելով իր կյանքը, սկսում է պաշտպանել Արտաշեսին՝ աջ ու ձախ հարվածելով թշնամուն։ Թևավորված նրա օրինակով,

հայկական բանակն ուժգին գրոհով ճեղքում  
է թշնամու օղակը։ Կովի թեժ ժամին Եր-  
վանդի զինվորներից մեկը սրի հարվածով  
թոցնում է Գիսակի գեմքի կեսը։ Խիզախ  
մարտիկն ընկնում է հերոսի մահով։ Մակայն,  
նրա մահն ապարդյուն չի անցնում։ Նա-  
խաձեռնությունն իրենց ձեռքն առած հայ-  
կական զորքերը հաջողությամբ շարունա-  
կում են առաջախաղացումը և լիովին ջախ-  
ջախում թշնամուն<sup>1</sup>,

Ահա և երկրորդ հայ քաջորդին, խիզախ  
զորավար Վասակ Մամիկոնյանի արժանա-  
վոր եղբայր Բագոս զորականը—հայրենիքի  
ու ժողովրդի համար զլուխը ետ դրած ան-  
վեհեր մի ռազմիկ։ Դժվար է առանց խորը  
հուզմունքի կարդալ այն մի քանի սեղմ  
տողերը, որոնք պատմում են մեղ Բագոսի  
անօրինակ անձնազոհության մասին։

<sup>1</sup> Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց.  
Տփխիս, 1913 թ., գիրք Բ., գլուխ ԽԶ, էջ 172, 174,

Հայերին հարկի տակ զնելու նպատակով  
և ըդ դարում պարսից Շապուհ արքան ծովա-  
փի ավագների չափ շատ իր զորքերով հար-  
ձակվում է Հայաստանի վրա: Հայկական  
զորքերը Վասակ սպարապետի առաջնորդու-  
թյամբ հերոսաբար դիմադրում են պարսից  
բանակներին և մեծ ջարդ տալիս նրանց:  
Մարտերից մեկում բացառիկ խիզախու-  
թյուն է ցույց տալիս Բագոս զորականը:  
Նրա զորամասի գեմ հանկարծ ելնում է  
թշնամու փղերի ահավոր գունդը: Մարտա-  
փը պատում է շատերին: Շալվում են  
ոմանց ծնկները: Գտնվում են և մարդիկ,  
որոնց գլխում սկսում է շարժվել պատե-  
րազմի դաշտը լքելու հանցավոր միտքը:  
Մակայն, Բագոսը չի սրդողում: Պարսից  
փղերի բանակի մեջ նրա աչքին է ընկնուժ  
մեծապես զարդարված մի փիղ: Ենթադրե-  
լով, որ դրա վրա նստածն ինքը Շապուհն  
է, Բագոսն իսկույն ցած է թոշում իր  
նժույգից և մերկացրած սրով վազում դեպի  
շարժվող հսկան: Մի ակնթարթ, և նա փղի

տակ է: Իր հաղթական բազկի ողջ ուժով  
Բագոսը մխում է սուրը Շապուհի փզի փու-  
րը: Հսկայական հասակով մեկ դետին է տառ-  
պալվում ահոելի կենդանին, իր ծանրու-  
թյան տակ ճզմելով խիզախ ու անձնազո՞ն  
հայ զորականին: Բագոսի համարձակու-  
թյունը վարտկում է հայոց զորքերին. հա-  
խուռն թափով գրոհելով պարսից բանակի  
վրա, նրանք կոտորում են թշնամուն մինչեւ  
վերջին մարդը<sup>1</sup>:

Հայ ժողովրդի ուազմական անցյալի պատ-  
մության մեջ առանձնակի աեղ է գրավում  
Խութեցի Հոմնանի՝ արաբական քոնակա-  
լության դեմ հայերի մղած բազմամյա  
ազատագրական մարտերի ամենափայլուն  
գեմքերից մեկի—հերոսական կերպարը:

Լեռնային Հայոստանի ցրտաշունչ ձմեռ-  
ներից մեկն էր: Արար հարկահանների  
անխնա հարստահարությունների դեմ հայ-

: Փաւատասի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց,  
Թիֆլիս, 1919 թ., գպր. 3., զմուխ իթ, էջ 212—215

կական մի քանի գավառներում ծագած ժո-  
ղովրդական ապստամբություններն արյան  
մեջ խեղդելուց հետո, Յուառուք ոստիկանն  
իր հրոսակներով բանակ էր դրել Մշո  
գաշտում։ Զմռան վրա հասնելուն պես բռն  
մանող կատաղի արջի նման, նա անհամբեր  
սպասում էր գարնան գալուն, որպեսզի նո-  
րից հարձակվեր իր որսի վրա, շարումակեր  
ավերել ու կողոպտել Հայաստանի անհնա-  
դանդ ու ըմբռստ մյուս գավառները։ Ան-  
հրաժեշտ էր կանխել վերահաս վտանգը,  
շթողնել թշնամուն տեղից շարժվելու։  
Դրան, ամենից ավելի, ընդունակ էին զեն-  
քին վարժ ու անվիճը լեռնցիք։ Պետք էր  
միայն կազմակերպել նրանց կամքն ու ու-  
ժը և առաջնորդել դեպի մարտ։ Կարենը  
դժվարին այդ գործն իր վրա է վերցնում  
Խութեցի Հովսանը։ Արագությամբ հա-  
մախմբելով իր զինված քաջերին, նա լեռ-  
նային հեղեղի նման իջնում է Մշո գաշտում  
բանակ դրած արարական գորքի վրա,  
անսուկնեալ և ուժեղ հարվածներով ցիր ու

ցան անում թշնամուն։ Յուսուփիը մախուս-  
տի է զիմում։ Հովսանը կրնկակոխ հետեւում  
է նրան։ Մառած ու սարսափած թշնամին  
իրեն նետում է հայկական եկեղեցիներից  
մեկը և բարձրանալով վերջինիս գմբեթը,  
ծվարում մի անկյունում։ Խութեցի քաջերը  
հասնում են նրա ետեից և շրջապատում  
եկեղեցին։ Հովսանն անձամբ բարձրանում  
է գմբեթը և տեղն ու տեղը սրախողիսող  
անուժ Յուսուփին։ Թշնամու հետ հաշիվը  
վերջացնելուց հետո նա բաց է թողնուած  
գերված ու բանտարկված իր հայրենակիցու  
ներին և ետ վերադարձնում նրանցից  
խլված ավարը։ Մասունն ազատվում է իրեն  
ազանացող ավերից ու ավարից<sup>1</sup>։

<sup>1</sup> Թ. Արծրունուոյ Պատմութիւն տանն Արծրունեաց,  
Թիֆլիս, 1917 թ., գպբ. Բ., գլուխ է, էջ 200—204,  
206։

Արաբացի մատենագիրները հայաստանի մասին,  
էջ 122։

Գիտակի, Բագոսի և Հովսանի արժանավոր  
հետնորդներից է կիլիկեցի Տիգրանը, հաս-  
տարազուկ և ուժեղ մի տղամարդ: Նա այն  
քաջարի հայ ուազմիկներից է, որոնց ձեռքը  
երբեք չի գողացել թշնամու վրա սուր  
քարձրացնելիս:

Խաղաղ ու շինարար կյանքով ապրում  
էր Կիլիկիայի հայ ժողովուրդը: Թորոս իշ-  
խանն արթուն աղանակի նման հսկում էր  
իր հայրենիքի սահմաններին:

Տավրոս լեռան կողմից անսպասելի կեր-  
պով հարձակվում են թաթարները (1107  
թ.): Նրանք սկսում են հրով ու սրով ավերել  
հայկական ավաններն ու գյուղերը, խոշտան-  
գել բնակիչներին: Թշնամու արյունոտ հան-  
գեսը, սակայն, երկար չի տեսում: Հայկական  
ժիացյալ ուժերը, քաջարի զորավարներ  
Թորոսի ու Վասիլի գլխավորությամբ, շու-  
տով կասեցնում են թաթարների առաջ-  
խաղացումը և սկսում են նեղել նրանց:  
Մինչդեռ թշնամու հրոսակների հրա-  
մանաւատարն աղմուկա-աղաղակով աշխա-

տում էր խրախուսել հայոց զորքերի հանկարծակի հարձակումից խռովապահար եղած իր մարտիկներին, Տիգրանն առյուծի նման խոյանում է նրա վրա և սրի մի ուժեղ հարվածով երկու կես անում երկաթե սաղավարտով ծածկված նրա գլուխը։ Նույն ակնթարթում նա գետին է տապալում նաև թաթար հրամանատարի երկու թիկնապահներին, որոնք փորձում էին վրիժառու լիւ նել նրանից։ Տիգրանի դեմ դուրս է գալիս թաթար զինվորների մի ամբողջ բանակ։ Հայ քաջորդին ուժգին հարվածներով պատռում է թշնամու ճակատը և մեծ քաջագործություններով շարժում առաջ, իբ ետեսից դեպի հաղթանակ տանելով հայոց զորքերին<sup>1</sup>:

Հայ ժողովուրել կարող է պարծենալ ոչ միայն իր հերոս զավակներով, այլև իր քաջարի դուստրերով, որոնք զիսավոր աստղի նման երբեմն փայլել ու անցել են

Մ. Զամնեանց—Պատմութիւն Հայոց, հատոր Գ., Վենետիկ, 1786 թ., էջ 28:

նըսա պատմական կյանքի երկնակամարք  
վրայով։ Այդպիսի հերոսական հայ կանան-  
ցից մեկն է անեցի Այծեմսիկը։ Երախտա-  
զիտության բուռն զգացումը լցնում է  
մարդու սիրտը, երբ կարդում է նրա-  
անձնվեր պայքարի հակիրճ հերոսապատումը։

Անի քաղաքը հայերից ետ խլելու հա-  
մար, Փաթլուն սմունով ամիրան, պարսկա-  
կան վարձկաններից և մուսուլման հրո-  
սակներից բաղկացած հսկայական բանա-  
կով 1125 թվին հարձակվում է Անիի վրա։  
Հայերը փոքրաթիվ ուժերով համառորեն  
պաշտպանում են քաղաքը և չեն թողնում,  
որ թշնամին գրավի այն։ Մի ամբողջ տարի  
Անին մնում է պաշարված։ Մի կողմից սո-  
վը, մյուս հողմից թշնամու անընդհատ  
կրկնվող կատաղի գրոհները արյունով ու  
սակորներով են ծածկում չորս կողմը։ Պա-  
տերազմը գնալով սաստկանում է։ Թշնա-  
մու զորքերը մոտենում են քաղաքի պա-  
րիսպներին։ Կովի անեղ ժամին Անիի  
պարիսպների վրա հանկարծ հայտնվում է

Այծեմնիկը։ Նա սկսում է կատաղորեն քար-  
կոծել առաջ ձգտող թշնամուն։ Չնայած  
կարկտի պես տեղացող նետերի տարափին,  
որոնք չարաչար վիրավորում էին նրա  
մարմինը, Այծեմնիկը մնում է անդրդվելի։  
Արհամարհելով ցամս ու մահը, նա արագ  
շարժումներով հանում է իր մարմնից թշնա-  
մու նետերը և նրանցով իսկ խոցում նրան։  
Այծեմնիկի արարքը զարմանք է պատճառում  
թաթար զինվորներին և մեծ տաղնապ ա-  
ռաջացնում նրանց մեջ։

Դարեր անց (1908 թ.) Անիի ավերակ-  
ները պեղող հետախույզութիւնականները  
քաղաքի միջնաբերդում գտան երիտասարդ  
կնոջ՝ նետերով խոցոտված մի գանգ։ Հաղա-  
նորեն հայրենի քաղաքի պաշտպանության  
գիրքերում ընկած հայ քաջուհու՝ անեցի  
Այծեմնիկի կամ նրա մարտական ընկերու-  
հիներից մեկի գանգն էր դա<sup>1</sup>։

<sup>1</sup> Սամուէլի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատ-

Հայ ժողովրդի «անանուն» հերոսների շաբախում պատվավոր տեղեն գրավում զեյթունցիքաջերը:

Շնորհիվ իր անառիկ դիրքի և ըմբռառաժողովրդի, Զեյթունն ապրում էր ինքնավարութիւնի կամաց կայսարական կայանքով: Թուրք բռնակալ էումեր փաշան 1780 թ. մեծ զորքով գալիս է Հայաստան՝ հարկի տակ դնելու զեյթունցոց: Լավ ծանոթ լինելով նրանց խիզախում մարտնչող բնավորությանը, էումերը չի համարձակվում միանգամից հարձակման անցնելու: Նա գերազասում է պաշարել Զեյթունը, որպեսզի ստիպի նրան անձնաւուր լինելու: Պաշարումը տեսում է 7 ամիս: Զեյթունցիք շարունակում են իրենց համառ դիմադրությունը: Սակայն, շուտով քաղցն ու սովն սկսում են անտանելի դաշնար: Սպառվում է նաև զինամթերքը:

Ժագրաց, Վաղարշապատ, 1893 թ., էջ 126—127:

Հ. Օբբելի—Անոյ ավերտիները, Վաղարշապատ, 1911 թ., էջ 47—48:

Հանգուգն ու արիասիրտ մի զեյթունցի, Հակոբ անունով, որոշում է փրկել իր հայրենակիցներին։ Մութը վրա հասնելուն պես նա վերցնում է իր ատրճանակը, ուսերին նետում մի խոյի մորթ և չորեքթաթ խառնվում էոմերի հոտին։ Ոչխարների հետ դանդաղորեն առաջ շարժվելով, Հակոբը համնում է փաշայի վրանին, աննկատելի թաքնվում մի քարի ետևում և շունչը պահած մնում ամբողջ զիշերը։ Լույսը քացվելուն պես նրա ականջին է հասնում նամազի, գուրս եկած փաշայի ձայնը։ Հեռվից նկատելով էոմերին, Հակոբը ծունկի է չոքում և ատրճանակի փողն ուղղելով թշնամու կրծքին, առաջին իսկ գնդակազ գետին է տապալում նրան։ Էոմեր փաշայի անսպասելի սպանությունն իրարտնցում է առաջ բերում նրա զորքերի մեջ։ Օդովելով տոփթից, Հակոբը իր մի քանի ընկերների հետ՝ սրով, հրացանով ու կացնով զինված՝ հարճակվում է թշնամու վրա և փախուս-

ակ մատնում նրան։ Զեյթունը նորից ազատ չունչ է քաշում։

A 6828  
Ահա և մի ուրիշ զեյթունցի «անանուն» հեռաւ իր հայրենի օջախն ոմբակոծող թշնամու թնդանոթաձիգին շարքից հանող քաջարի Մարկոսն է դա։

Թուրք բռնակալ Ազիզ փաշան 40.000-անոց իր բանակով 1862 թ. ամռանը շրջապատում է լեռնային Զեյթունը։ Նա ուզում էր արյան մեջ խեղդել զեյթունցոց՝ ազատվելու համար անհնազանգ ու ապստամբ այդ ժողովրդից։ Իրենց փոքրաթիվ ուժերով զեյթունցիք արիաբար դիմադրում են թշնամուն։ Արյունահեղ ու կատաղի կոիվների հրգեհը բռնում է Զեյթունի լեռներն ու ձորերը։ Առանձնապես ուժեղ է լինում արևելյան ձորում տեղի ունեցող ճակատա-

<sup>1</sup> Մ. Վարժապետան—Հուշիկը Զեյթունի, Մարզվան.  
1912 թ., էջ 43—48.

մարտը։ Հայերին այստեղ լրջորեն նեղուժ  
է թշնամու թնդանոթը։ Անհրաժեշտ էր լուց-  
նել այն, սպանել թնդանոթաձիգին։ Այդ  
դժվար գործը կամավոր կերպով իր վրա է  
վերցնում զեյթունցի Մարկոսը։ Քահանան  
ամեն կերպ համոզում է նրան հրաժարվել  
իր մտքից։ Սակայն, Մարկոսը մնում է  
անդրդվելի։

«Անմիտ, մեռնելու կերթաս», — ասում է  
զայրացած քահանան։

«Այն, — ալատասխանում է առյուծասիրտ  
զեյթունցին, — գիտնմ թե պիտի մեռնիմ,  
բայց ուրիշները պիտի ապրեցնեմ»։ Այս ասե-  
լով՝ նա անհետանում է ձորի մեջ։ Մերթ սողա-  
լով, մերթ քայլելով՝ Մարկոսն զգուշու-  
թյամբ մոտենում է թշնամու թնդանոթաձի-  
գին, քաշում հրացանի բլթակը և թափալ-  
գըլոր փռում է նրան Աղիղ փաշայի ոտնե-  
րի տակ։ Նույն վայրկյանին հակառակորդի  
գնդակով գետին է ընկնում նաև ինքը։  
Սակայն, Մարկոսն արդեն հասել էր իր  
նպատակին, Զարհուրելով հայերի այս

անակնկալ հանդպնությունից և իր բանակում կովող չերքեղական զորքի պարտությունից, Աղիդ փաշան որոշում է փախուստի դիմել<sup>1</sup>:

Հայոց քաջերն աչքի են ընկել ոչ միայն իրենց հայրենի հողի ու հարադատ ժողովը դի պաշտպանության գործում, այլև այն ժամանակ, երբ նրանք իրեն զինվորներ կամ զորավարներ մասնակցել են իրենց բարեկամ ու հարեան ազգությունների կատարած ռազմական արշավներին, նրանց մզած ազատագրական կոիմսերին։ Հատկապես ուշազրավ են այս տեսակետից ոռու ժողովրդի զենքի հաղթանակներին մասնակցած հայազգին անվանի ու «անանուն» հերոսները։ Ում հայտնի չեն հայոնի զենքալներ Մադաթովի, Լազարկի, Տեր-Ղուկասովի փայլուն անունները։ Ռուսական

<sup>1</sup> Զելքունցի—Զեյթունի անցյալին ու ներկայեն,  
էջ 116,

բանակն ունեցել է նաև բազմաթիվ «անառնուն» հայ հերոսներ, որոնք իրենց խիզախ ու անձնազո՞ր արարքներով փրկել են հազարավոր կյանքեր, դարձել են իրենց ուռանդրայրների հիացմունքի առարկան, արժանացել հրամանատարության բարձր պարգևներին։

Ռուսական զենքի հաղթանակներին մասնակցած այդպիսի հայ քաջորդիներից մեկն է Ղարաբաղի Կուսապատ գյուղացի զարգյար Թունի (ոսկերիչ Հարությունի) որդին՝ Վանի Աթաբեղյանը (հետագայում՝ Վանի Յուղբաշի)։ Մեծ են Վանիի մատուցած ծառայությունները Ղարաբաղում գործող ռուսական զորքերին։ Նա էր, որ 1806 թվին խիզախությամբ անցնելով պարսից թագաժառանգ Աբաս-Միրզայի հսկայական բանակի միջով, լուր տարավ Գանձակում գտնվող ռուսական զորքին և անձամբ գեզի Շուշի առաջնորդեց գնդապետ Կարյազինի զորախումբը՝ այնտեղի բերդում պաշարված ռուսական փոքրաթիվ ուժերին օդնելու հա-

մար: Նա էր, որ հայ հեծյալների մի փոքր  
բաթիվ խմբով, ճանապարհին, այնքան մեծ  
քաջություններ կատարեց 600 հոգուց  
բաղկացած ոռուսական զորախմբի վրա հար-  
ձակված 10.000-ից ավելի պարսից բանտ-  
կին դիմադրելու գործում:

1812 թվի ձմռանը Աբաս-Միրզան երկ-  
բորդ անգամ արշավում է Ղարաբաղի վրա:  
Զաֆար Ղուլի խանի հրամանատարությամբ  
գործող պարսկական հեծելազորը հարձակվում  
է Թարթար գետի մոտ գտնվող ոռուսական գու-  
մարտակի վրա և մեծ կորուստ պատճառում  
նրան:

Շուշի բերդից օգնության են ուղարկում  
Վանին: Ճանապարհին հանդիպելով կոտո-  
րածից վերադարձող պարսկական զորքին,  
Վանին, իր մի բուռ քաջների հետ, ամրա-  
նում է մոտակա Շահ-Բուլաղ բերդում և  
մի քանի օր շարունակ հերոսաբար դիմա-  
դրում թշնամու հսկայական բանակին:  
«Վերջը թնդանոթների հարվածներից բեր-  
դի դոները խորտակվում են, պարսից զոր-

Քերը կատաղությամբ ներս են թափփում,  
բայց մեծ է լինում նրանց զարմանքը  
երբ բերդի մեջ ոչ ոքի չեն գտնում։ Վանին  
մի օր առաջ էր զորքերը գիշերով գուրս էր  
բերել բերդից և լեռների վրայով, սարսա-  
փելի բարձրավանդակներից տարել էր հա-  
յոց Թարուխ կոչված գյուղը»։

Բարձր գնահատելով Վանիի ծառայու-  
թյունները, ոռւսական կառավարությունը  
պարզեատրում է նրան ոսկե մեղալով, տա-  
լիս է պրապորշիկի աստիճան և նշանա-  
կում ցմահ կենսաթոշակ<sup>1</sup>։

---

Ռուսական զենքի զորավիգ մի հայ քա-  
ջորդու մասին ես։

1877 թվի ոռւս-թուրքական պատերազ-  
մի ծանր օրերն էին։ Ռուսների փայլուն  
հաղթանակներին հաջորդել էր ուազմական

<sup>1</sup> Բաֆֆի—Խամսայի մելիքությունները. Թիֆլիս,  
1882 թ., էջ 285—291.

անհաջողությունների մի շրջանու Բայազետի  
 բերդը, ուր գտնվում էին 1000-ի չափ ռուս  
 զինվորներ և նույնքան հայ ու այլազգի  
 կամավորներ, պաշարված էր թուրքական  
 կանոնավոր զորքի և 20.000-ից ավելի  
 թուրք, քուրդ խուժանի կողմից։ Սովու  
 սուրն սպառնում էին բնաջինջ անել բեր-  
 գապահներին։ Փրկության միակ ելքը դրսի  
 օգնությունն էր։ Անհրաժեշտ էր թշնամու  
 օղակի միջով լուր տանել Բայազետից ոչ  
 շատ հեռու գտնվող գեներալ Տեր-Ղուկա-  
 սովին։ Մեծ խիզախություն ու անձնազո-  
 նություն պահանջող այդ ծանր գործը  
 հանձն է առնում բերգապահ զորքի մեջ  
 գտնվող մի հայ երիտասարդ՝ Սամսոն Տեր-  
 Պողոսյանը<sup>1</sup>։ Մերթ ծպտվելով իրեն ծաղ-  
 րածու, մերթ խենթ ձևանալով, երբեմն մե-  
 նակ կովի մտնելով շատերի հետ, հաճախ

<sup>1</sup> Հայ մեծանուն վիպասան Բաֆֆու «Խենթ» վեպի  
 հերոս Վարդանի նախատիպը (տես՝ «Խենթ», Մոսկ-  
 վա, 1890 թ., էջ 18)։

վտանգի տակ գնելով իր կյանքը, Սամսոնը  
ճեղքում է թշնամու հրոսակների հոկա-  
յական բանակը, հասնում ոռւսական զոր-  
քին, տալիս նամակը Տեր-Դուկասովին և  
օդնություն բերելով՝ փրկում 2000-ից ա-  
վելի պաշարված բերդապահների կյանքը:  
Թուսական բանակի հրամանատարը ջեր-  
մորեն համբուրում է հայազգի հերոսի հա-  
կատը և զարդարում նրա կուրծքը Գեորգ-  
յան խաչով<sup>1</sup>:

Բերված դրվագներով չեն սահմանափակ-  
վում հայ քաջորդիների կատարած սխրա-  
գործությունները: Դրանց թիվն ազատ  
կերպով կարելի է կրկնապատկել ու բաղ-  
մապատկել: Հայ ժողովրդի բաղմադարյան  
կյանքում տեղի ունեցած ազատագրական  
յուրաքանչյուր պատերազմ, պաշտպանա-  
կան ամեն մի կոփիլ ստեղծել է նման բազ-

<sup>1</sup> «Սուբհանդակ» օրաթերթ, № 15, 1911 թ. Թիֆլիս:

մաթիվ «անանուն» հերոսներ։ Սակայն,  
նշված փոքրաթիվ օրինակներն էլ բավա-  
կան են հայ քաջորդիների ընդհանուր բնու-  
թագիրը տալու համար։ Դրանք, մեծ մա-  
սամբ, ժողովրդի ծոցից գուրս եկած մար-  
դիկ են, կորովի ու ջլապինդ ուազմիկներ,  
խիզախ ու անվեհեր, համարձակ ու արի  
անձնավորություններ։ «Անանուն» այդ  
հերոսների ամենակարևոր հատկությունը,  
սակայն, նրանց ներքնաբուխ ու խորը  
հայրենասիրությունն է, բուռն ատելու-  
թյունն իրենց հայրենիքի ու ժողովրդի  
թշնամիների նկատմամբ։ Իրենց անհատա-  
կան ու հասարակական բոլոր հատկություն-  
ներով հայ քաջորդիներն իրենց ծնող ու  
մնող ժողովրդի հարազատ զավակներն են,  
նրա կենդանի մասնիկները։ Արեի ճառա-  
գայթների նման, որոնք կրում են իրենց  
մեջ արեգակի կենսատու լույսն ու ջերմու-  
թյունը, հայ քաջորդիները մարմնավորում  
են մեր ժողովրդի լավագույն հատկություն-  
ները, նրա ազատասիրական ոգին ու հերո-

սական բնավորությունը։ Նրանք են, որ  
սեփական կյանքի գնով իրականացրել են  
հայ ժողովրդի առաջարկավոր զորավարների  
կողմից մտածված ազատազրական պատե-  
րազմների խիզախ ու համարձակ ծրագրերը։  
Նրանց հերոսական ուսերի վրա է բարձ-  
րացել այդ զորավարների հոչակի ու փառ-  
քի մարմարե արձանը։

---

Գերմանական գալլիչիչների դեմ մղվող  
այսօրվա Հայրենական մեծ պատերազմին,  
բազմաթիվ բարձրաստիճան հայ զորավար-  
ների ու հրամանատարների հետ, մասնակ-  
ցում են նաև մեր ժողովրդի հաղարավոր  
շարքային քաջորդիները։ Իրենց հերոսա-  
կան նախնիների՝ Բագրոսի, Հովհաննի և  
մյուսների նման, նրանք պատերազմի դաշ-  
տում աչքի են ընկնում մեծ քաջությամբ  
ու արիությամբ, ցույց են տալիս խիզա-  
խության ու անձնազոհության անմեռ օրի-  
նակներ։ Ժամանակակից հայ քաջորդիների  
հերոսությունների առջև երբեմն գումառ-

վում ու խամրում են նրանց նախնիների  
ամենափայլուն սխրագործություններն ան-  
գամ: Եվ դա հասկանալի ու ընական է:  
Եթե անցյալում նրանք կովում էին միայն  
իրենց ազգակիցների ազատության, հաճախ  
էլ միայն իրենց գավառի ու նրա բնակիչ-  
ների կյանքի փրկության համար, այժմ  
նրանց հետնորդներին դեպի մարտ է մղում  
Սովետական լայնածավալ հայրենիքը, այն-  
տեղ գոյություն ունեցող նվիրական կար-  
գերը, Սովետական մեծ ժողովրդի անսահ-  
ման սերը... Բոլորովին այլ է այսօր նաև  
հայ քաջորդիների ճակատագիրը: Նրանք  
այլևս հին «անանուն» հերոսները չեն,  
որոնցից շատերի մասին հիշողություն իսկ չե-  
մնացել պատմության մեջ: Նրանք այժմ  
լավ հայտնի են ոչ միայն իրենց հայրենա-  
կիցներին, այլև Սովետական Միության  
մյուս բոլոր ազգություններին: Նրանց մա-  
սին հիմա գրում են թե հայ գրողներն ու  
լրագրողները և թե ուսւներն ու ուկրաի-  
նացիք, ուղբեկներն ու օսերը: Նրանց կա-

տարած սխրագործությունների մասին կարգում ու լսում է ողջ աշխարհը:

Իրքև օրինակ հիշենք 1942 թ. հոկտեմբերի 2-ին Հայրենական պատերազմի ռազմաճակատներից մեկում հերոսի մահով ընկած շարքային մարտիկ, զարաբաղցի՝ սակավակոր Մեսրոք Ղազարյանին:

Թշնամին պատրաստվում էր գրոհել մեր զորքերի դասավորության վրա: Անհրաժեշտ էր շտապ պայթեցնել նրա ճանապարհին ընկած կամուրջը: Կարևոր այդ գործը կամավոր կերպով հանձն է առնում Մեսրոքը և անմիջապես գործի անցնում: Արդեն ամեն ինչ պատրաստ է: Սակայն պայթյունն ուշանում է՝ ականին միացված լարի երկարության պատճառով: Հերոսի սիրտը չի համբերում. իսկ եթե հանկարծ թշնամին կանխի պայթյունը և արագ անցնի գետի այս կողմը՝... պետք է արագացնել գործը, ինչ գնով էլ լինի կարճացնել զեպի ականը տանող կրակի լարը... և դա պետք է անի ինքը: Մի պահ, և հանկարծ պայ-

թում է տկանը՝ կամուրջի հետ հօդս ցնդեց-  
նելով նաև խիզախ մարտիկին։ Թշնամու-  
ճանապարհը փակված է։

Հուղիչ է այն երկտող-նամակը, որ գրել է  
Մեսրոբ Ղազարյանը մահվանից մի քանի  
վայրկյան առաջ և փակելով իր ճամբորդա-  
կան ջրամանի մեջ՝ նետել գետը։ «Մնաք  
բարով, իմ արևային հայրենիք, իմ ծնող-  
ներ, իմ մարտական ընկերներ. այլևս եր-  
բեք ձեզ չեմ տեսնելու։ Կարճացրի շնուրը  
և իմ կյանքի թելը։ Չեմ ափսոսում, ըն-  
կերներ։ Ղաղթանակը մերը կլինի. հիշեք  
ձեր ընկեր Մեսրոբ Ղազարովին» («Սովե-  
տական Հայաստան», 1942 թ., № 275)։

Եթե Մեսրոբ Ղազարյանն իր այդ անձ-  
նուրաց արարքը կատարած լիներ անցյա-  
լում, այն կիմանային նրա զինակիցները.  
այդ մասին կլսեին գուցե նրա հայրենակից-  
ները. թերևս նրա անունը մտներ նաև ժա-  
մանակակից որևէ գրական հուշարձանի մեջ,  
բայց ոչ ավելին... Մինչդեռ՝ Ղազարյանի  
անունն ու անմահ սիրագործությունն

այսօր հայտնի է Սովետական Մեծ Միռլ-  
թյան բոլոր քաղաքացիներին, նրա մասին  
ի լուր աշխարհի հայտնեց Սովետական  
Խնդրմբյուրոն 1942 թ. հոկտեմբերի 4-ի  
իր հաղորդագրության մեջ:

Ահա թե ովքեր են եղել հայ քաջորդիներն  
անցյալում:

Ահա թե ովքեր են նրանց արժանավոր  
հետնարդներն այսօր:

**Армянский филиал Академии Наук СССР**

---

**Боевые подвиги сынов Армении**

**А. Ганзелиян**

**АРМЯНСКИЕ ХРАБРЕЦЫ**

**(На армянском яз.)**

**Изд. Армфак**

**Ереван, 1943**

Վ.Յ 00397, պատ. №10, տիրաժ 4000, 2 առաջը.  
Ժամուկ, մայուլում 19200 տառանիշ։ Սառըազգված  
է տպելու 6 փետրվարի 1943 թ։

---

ԼԺԿ-ի Գիտա-մանկավարժական տուն, Աբովյան, 104.


ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0042920

(154)

ԳԻՒԾ 1 Ռ.



Դ 067.015